ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գիտելիքի, ստեղծագործական կարողությունների թեստ

ԵՐԵՎԱՆ 2026

2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ (ԸՍՏ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ) «073101.00.6 –ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱ՝ «ԳԻՏԵԼԻՔԻ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՍՏ (ԳՍԿԹ)»-Ի ՕՐԻՆԱԿ 1

Թեստը կազմված է 3 հիմնական բաժնից.

1. Մաթեմատիկա	36 առաջադրանք՝ 9 միավոր
• Հանրահաշիվ	16 առաջադրանք՝ 4,0 միավոր
• Երկրաչափություն	20 առաջադրանք՝ 5,0 միավոր
2. Ճարտարապետական տրամաբանություն	4 հարց՝ 1 միավոր
• Ճարտարապետական և տրամաբանական հարցեր՝	4 հարց՝ 1 միավոր

1 և 2 բաժնի յուրաքանչյուր հարցը գնահատվում է՝ 0,25 միավոր

/Ընդհանուր 40 առաջադրանք և հարց/ 10 միավոր

3. Գծագրություն	2 առաջադրանք՝ 10 միավոր
• Լծորդում	1 առաջադրանք՝ 4 միավոր
• Աքսոնոմետրիա, հատույթ, կտրվածք, պրոյեկցիա	1 առաջադրանք՝ 6 միավոր

/Ընդհանուր 42 հարց-առաջադրանք/

Թեստի ամբողջական կատարման և ձևաչափի լրացման համար տրվում է 5 ժամ (300 րոպե), առանց ընդմիջման:

ԹԵՍՏ

1. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

1. Նշվածներից ո՞ր եռյակում են թվերը գրված նվազման կարգով:

ա) $(1,7)^3, (1,7)^2, 1$ բ) $(1,7)^2, 1, (1,7)^3$ գ) $1, (1,7)^2, (1,7)^3$ դ) $1, (1,7)^3, (1,7)^2$

նշումների համար

2. Գտնել $2\frac{3}{4}:\left(1\frac{1}{2}-\frac{2}{5}\right)\cdot\frac{3}{5}$ արտահայտության արժեքը:

ա) 2 բ) 1 գ) $4,3$ դ) $1,5$

նշումների համար

3. Աշխատակցի աշխատավարձը 2025թ. հունվարին եղել է 200000 դրամ, փետրվարին՝ 180000, մարտին՝ 240000, իսկ ապրիլին՝ 220000: Որքա՞ն դրամ է աշխատակցի այդ 4 ամիսների միջին աշխատավարձը:

ա) 840000 բ) 420000 գ) 210000 դ) 220000

նշումների համար

4. Թիվը փոքրացրել են 20%-ով: Քանի՞ տոկոսով պետք է մեծացնել ստացված թիվը, որպեսզի նորից ստացվի տրված թիվը:

ա) 20 բ) 25 գ) 80 դ) 75

նշումների համար

5. Գտնել թիվը, եթե նրա 110%-ը հավասար է 770:

ա) 700 բ) 77 գ) 847 դ) 70

նշումների համար

6. Լուծել $\frac{4x-9}{x+3}=\frac{5x-12}{x+4}$ հավասարումը:

ա) 0 բ) 4 գ) 0 և 4 դ) -4

նշումների համար

7. Լուծել $(x-5)^2(x-8)\geq 0$ անհավասարումը:

ա) $[8,\infty)$ բ) $(-\infty;5]\cup[5,\infty)$ գ) $\{5\}\cup[8,\infty)$ դ) $[5;8]$

նշումների համար

8. Պահանջվում է պատրաստել 1:4 հարաբերությամբ ջրի և սպիրտի խառնուրդ: Քանի՞ լիտր ջուր և սպիրտ պետք է վերցնել 10լ այդպիսի խառնուրդ պատրաստելու համար:

ա) 2 և 8 բ) 8 և 2 գ) 6 և 4 դ) 4 և 6

նշումների համար

9. Արկղում կա այնքան տուփ, որքան գրիչ կա յուրաքանչյուր տուփում: Քանի՞ տուփ կա արկղում, եթե արկղում կա ընդամենը 900 գրիչ:

ա) 450 բ) 100 գ) 30 դ) 90

նշումների համար

10. Քանի՞ տոկոսով կփոքրանա քառակուսու մակերեսը, եթե նրա կողմը փոքրացնենք 20%-ով:

ա) 50 բ) 25 գ) 36 դ) 64

նշումների համար

11. Մանրակի լայնությունը 1:5 մասշտաբով գծագրում 8 սմ է: Որքա՞ն կլինի այդ մանրակի լայնությունը 1:4 մասշտաբով գծագրում:

ա) 10 դմ բ) 6,4 սմ գ) 12 սմ դ) 10 սմ

նշումների համար

12. Մի քանի մարդ հանդիպելիս միմյանց ողջունեցին ձեռք սեղմելով: Քանի՞ մարդ էին հանդիպել, եթե ձեռքսեղմումների թիվը 21 է:

ա) 9 բ) 8 գ) 7 դ) 14

նշումների համար

13. Գտնել $f(x)=1-\frac{2}{x^2+1}$ ֆունկցիայի գրաֆիկի և կոորդինատային առանցքների հատման կետերի կոորդինատները:

ա) (0,-1) բ) (-1,0) գ) (0,-1), (1,0) դ) (-1,0), (0,-1), (1,0)

նշումների համար

14. Գտնել $y=\sqrt{x}$ և $y=6-x$ ֆունկցիաների գրաֆիկների հատման կետը:

ա) (1,5) բ) (4,2) գ) (9,3) դ) (16,2)

նշումների համար

Ունենք 80գ 25%-անոց աղի լուծույթ:

15. Գտնել աղի զանգվածն այդ լուծույթում:

նշումների համար

16. Որքա՞ն ջուր պետք է գոլորշիացնել լուծույթից, որպեսզի աղի պարունակությունը դառնա 80%:

նշումների համար

$ABCD$ **զուգահեռագծի մեջ** $\angle B = 3\angle A$**,** $AB = 5\sqrt{2}$ **սմ,** $BC = 7$ **սմ:**

17. Գտնել A անկյան մեծությունը:

ա) 135° բ) 45° գ) 60° դ) 120°

նշումների համար

18. Գտնել BE մեծ բարձրության երկարությունը:

ա) $\frac{7\sqrt{2}}{2}$ սմ բ) 5 սմ գ) 12 սմ դ) 7 սմ

նշումների համար

19. Գտնել AC անկյունագծի երկարությունը:

10. ա) 11 սմ բ) 12 սմ գ) 13 սմ դ) 15 սմ

նշումների համար

20. Գտնել D գագաթի հեռավորությունն AC անկյունագծից:

ա) $\sqrt{29}$ սմ բ) 2,69 սմ գ) 6,49 սմ դ) $\frac{35}{13}$ սմ

նշումների համար

Ուղղանկյունանիստի հիմքի կողմերն են 9 սմ և 12 սմ, իսկ անկյունագիծը 17 սմ է:

21. Գտնել ուղղանկյունանիստի կողմնային կողի երկարությունը:

ա) 6 սմ բ) 10 սմ գ) 14 սմ դ) 8 սմ

նշումների համար

22. Գտնել ուղղանկյունանիստի ամենամեծ մակերես ունեցող նիստի անկյունագծի երկարությունը:

ա) 16 սմ բ) 10 սմ գ) 15 սմ դ) 18 սմ

նշումների համար

23. Գտնել ուղղանկյունանիստի կողմնային մակերևույթի մակերեսը:

ա) 336 սմ^2 բ) 326 սմ^2 գ) 346 սմ^2 դ) 168 սմ^2

նշումների համար

24. Գտնել ուղղանկյունանիստի ծավալը:

ա) 846 սմ^3 բ) 862 սմ^3 գ) 864 սմ^3 դ) 868 սմ^3

նշումների համար

Շրջանագիծը, որի շառավիղը 6 սմ է, շոշափում է կանոնավոր եռանկյան կողմերից մեկը և մյուս երկու կողմերի շարունակությունները:

25. Գտնել եռանկյանն արտագծած շրջանագծի շառավղի երկարությունը:

ա) 2 սմ բ) 4 սմ գ) 6 սմ դ) $4\sqrt{3}$ սմ

նշումների համար

26. Հաշվել եռանկյան մակերեսը:

ա) 12 սմ^2 բ) 20,78 սմ^2 գ) $12\sqrt{3}$ սմ^2 դ) 24 սմ^2

նշումների համար

Ուղղանկյուն սեղանի հիմքերի երկարություններն են 3սմ և 5սմ, իսկ փոքր սրունքի երկարությունը՝ 4սմ:

27. Գտնել սեղանին հավասարամեծ քառակուսու կողմի երկարությունը:

ա) 5 սմ բ) 3 սմ գ) 4 սմ դ) 6 սմ

նշումների համար

28. Գտնել սեղանի փոքր անկյունագծի երկարությունը:

ա) 7 սմ բ) 5 սմ գ) 6 սմ դ) 5,5 սմ

նշումների համար

Կոնի կողմնային մակերևույթի փռվածքը 24 սմ տրամագծով կիսաշրջան է:

29. Հաշվել կոնի լրիվ մակերևույթի մակերեսը:

ա) 108π սմ^2 բ) $48\pi^2$ գ) 243π սմ^2 դ) 432π սմ^2

նշումների համար

30. Գտնել կոնի ծնորդի և բարձրության կազմած անկյունը:

ա) 90° բ) 45° գ) 60° դ) 30°

նշումների համար

Եռանկյան կողմերի երկարություններն են՝ 17, 25 և 28:

31. Գտնել եռանկյան մեծ կողմին տարված բարձրության երկարությունը:

նշումների համար

32. Գտնել եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:

նշումների համար

$AD = 15,\ BC = 9$ **հիմքերով և** $AB = 10$ **մեծ կողմնային կողով** $ABCD$ **ուղղանկյուն սեղանը պտտվում է փոքր հիմքի շուրջ:**

33. Գտնել պտտման արդյունքում AB-ի առաջացրած կոնական մակերևույթի փռվածքի սեկտորի անկյան աստիճանային չափը:

նշումների համար

34. Գտնել պտտման արդյունքում AD-ի առաջացրած գլանային մակերևույթի հիմքի շառավղի երկարությունը:

նշումների համար

35. Գտնել առաջացած մարմնի ծավալը:

նշումների համար

36. Գտնել պտտումից առաջացած մարմնի մակերևույթի մակերեսը:

նշումների համար

37. Ո՞ր ուրվագծային սխեման է համապատասխանում ներկայացված Ճակատին:



ա)



գ)



բ)



դ)



ա) **բ)** **գ)** **դ)**

38. Ո՞ր ուրվագծային սխեման է համապատասխանում ներկայացված հեռանկարին:

ա)

գ)



բ)



դ)



ա) **բ)** **գ)** **դ)**

39. ***Ո՞րն է վերոնշյալ պատկերների շարքում հաջորդը:***



ա) **բ)** **գ)** **դ)**



ա) **բ)** **գ)** **դ)**

---

40. ***Տրված 4 պատկերներից (ա, բ, գ, դ) երեքով կարելի է կազմել կատարյալ քառակուսի: Նշել ավելորդ պատկերը:***

☐ ա, ☐ բ, ☐ գ, ☐ դ



---

1. Աքսոնոմետրիա, հատույթ, կտրվածք, պրոյեկցիա

Տրված են մարմնի երկու պրոյեկցիաները: Պահանջվում է կառուցել ուղղանկյուն իզոմետրիկ աքսոնոմետրիան և տալ բոլոր անհրաժեշտ կտրվածքները:



2. Լծորդում

Կառուցել տրված պայմաններին (չափեր և շոշափումներ) բավարարող պատկերը, որը կազմված է հատվածներով և շրջանագծային աղեղներով: Փոքր շրջանակներով նշված են երկու գծերի շոշափման կետերը: Նշել չափերը և պահպանել կառուցման բոլոր գծերը: